63. ՔԱՋԱՆՑ ԹԱԳԱՎՈՐԻ ՀԱՐՍԸ

Կէղնի ու չէղնիր, թաքավոր մի կէղնի, պստիկ տղե մի կէղնի։ Թաքավորը կիշկա օր ուր տղի քեֆ չրացվիր։ Վազիրին կկանչա, կասա.— Վազի՛ր, իմ տղի քեֆ չրացվիր, իմ տղի պես տղե մի քեզ-նե գուզեմ։

Վազիր գելնի, խեծնի ձին, էրկրեն դուս կէրթա։ Շատ կպտոտ-վի, կուգա գեղի մը ռաստ, կասա՝ «Ես իմ ձին, ուլար պըտի թող-նիմ, իմ ձին դյոր օր կայնավ, էնտեղ մսաֆըր կէղնիմ. ասուծով պըտի ես տղեն էլ էնտեղ գտնիմ։ Օր չգտա՝ ես զիս ըսպանեմ, էլ չըմ էրթա թաքավորի հ'առեջ»։

Կուգա գեղի գլոխ, ձին կթողնի, ձին ինքն ուրին կէրթա. կէրթա դեմ կկայնի մարդու մի դուռ։ Տանտեր դուրս կելնի, կտեսնի օր ձիա-վոր մի դուռ կայնուկ ա, կկանչա տղին.— Տղա՛, տղա. արի, ըսա մսաֆըր, ուր ձին տա՛ր տուն։

Մսաֆըր կէրթա տուն, տեղ կուտան նշանց, կնստի։ Էրկու օր կմնա, չըն խարցուցեն. մըսաֆըր կտեսնի պստիկ տղեմի, կուգա մսաֆրրի հ'առեջով կընցնի։ Մսաֆըր կասա՝ «Ասուած իմ գործ շինեց, էսա տղեն է թաքավորի տղի պես»։ Մսաֆըր սարբաստ ու-րախ, էտա տան մեջ կմտնի ու գելնի, կկանչա տան տեր, կուսա.— Դուք հ'որի՞ն չխարցուցեք՝ հ'որի՞ն ես էկեր, ի՞նչ խղմաթ ունիս։

Տան տեր կասա.— Մեզի ադաթ չկա օր մըսաֆըրից շուտ բան խարցուցենք. հալա դուն էրկու օր ես էկեր։

— Ըպա ե՞փ պտի խարցուցեք։

Տան տեր ասաց.— Իրեք օր մնաս՝ նոր մենք կխարցուցենք, թե հ'որի՞ն ես էկեր, ի՞նչ խզմաթ ունիս։

Մսաֆըր ասաց.— Հիմա բռնա օր իրեք օր թմմավ, մկա խարցուցեք։

— Շատ աղեկ,— ասաց տան տեր։

Տան տեր ասաց մսաֆըրին.— Բարով ես էկեր ես, մսաֆըր, ասա՛ տեսնինք ի՞նչ խղմաթ ունիս օր էկեր ես էստեղրանք։

Մսաֆըր ասաց.— Ես թաքավորի վազիրն եմ, թաքավորին պըստիկ տղե մի կա, էս քու տղի պեսն ա, էսա վեց ամիս ա օր ես կըպտոտվիմ, թաքավորի տղի պես տղե մի չտեսա օր տանիմ, թաքավորի տղի խետ խաղա, օր թաքավորի տղի քեֆ պեացվի։ Էս քու տղեն էնոր տղի պեսն ա, քու տղեն պըտի տաս, տանիմ, յան զիս ըստա կըսպանես, յան տղեն կուտաս, կտանիմ։

Տանտեր մարդ ուր կնկան կանչեց.— Կնի՛կ, դուն էլ ա տղի մերն ես, ի՞նչ կասես, էսա թաքավորի վազիրն ա, ամլե մի տեղ պտոտվեր ա, մեր տղի պես տղե մի չտեսեր ա, մեր տղեն թաքավորի տղի պես տղե մե, էսի էլ ա կուղա մեր տղեն կտանի թաքավորի աղի խետ օր թաքավորի տղի քեֆ պեացվի, դու ի՞նչ կասես։

Կնիկն ասաց.— Մա՛րդ, դուն դիտես, ես իմ սրտով կուտամ։ Մեր ումը փչեր ա, մենք ենք՝ էս մեկ զավակ, էլ մեզի ուրիշ ճիժ չունինք. օր աստված մեզնե առնի, չկա՞նար առնիր, օր աստված տվեր ա մեր տղեն էլմե կտառնա կուգա մեր վերեն։

Վազիր ասաց.— Շատ շնորհակալ եմ ձեզնե, օր դուք ձեր տըղեն ձի տվեցիք։

Վազիր կմնա էրկու օր, կհեծնի ձին, կառնի տան տիրու տղեն ուր խետն ու կէրթա։ Կէրթա չուր մի թաքավորի էրկիր։ Թաքավորի տղեն էլ ա կրերա էտ տղի խեչ մեկ տեսակ շոր կխակուցա, էրկուսի շորեր էլա իրարուց չչոկվեր։ Կառնի կէրթա թաքավորի հ՝առեշ։

Վազիր կասա.— Թաքավոր, ո՞ր մեկն ա քու տղեն։

Թաքավոր շատ կիշկա, չճանչնար ուր տղեն ո՛ր մեկն ա։

Է, չէ՞ թաքավորի տղեն ուր տան մեշ սարբաստ ա, թաքավոր քիչ մի կիշկա օր չը ճանչընար, ուր տղեն կվազնի կէրթա թաքավորի խեչ։

Թաքավորն ա էրկու տղեն էլա կդնե վարժատուն, էրկուսն էլ ա մեկ տեղ կկարդան յոթ ութ տարի։ Շատ խորոտիկ ուսում կսորվին։ Վարժատնե կելնին, ամենքը էղան տաս տասնըհինգ տարեկան։ Թաքավոր էրկու խատ ձի էն էրկսի հ՝ապով կրերա։ Շատ աղեկ ձի կէղնին, մեկ կուտա ուր տղին, մեկել կուտա մեկել տղին։ Թաքավոր կկանչա վազիրին.— Վազի՛ր, արի էսա տղեն օր բերեցիր, էսա տղին անուն չկա, էսոր անուն մի դնենք։

Վազիրն ասաց.— Թաքավոր, դո՛ւն էսոր անուն մի դիր։

Թաքավորն ասաց.— Դուն բերեր ես, դուն պրտի դնես։

Վազիրն ասաց.— Էսոր անուն Քյուրդ-Օղլի է։

Թաքավոր կանչեց էտ տղին.— Տղա՛, արի էսա տեղ, քու անուն դուն էլ հ'իմցիր, քու անուն Քյուրդ-Օղլի ա։

Քյուրդ-Օղլին ու թաքավորի տղեն հ'ելան խեծան ձիանք, գացին պրտոտվելու։

Տարի մի հմալ մնաց, ուրանց բան ու գործ էտ էր՝ ձի կխեծնին ու կպտոտվին։ Օրմ' էլա, թաքավորի տղեն մընակ խեծավ ձին, գնաց պտոտվելու, գնաց ընկավ պառվու մի կորեկի արտի մեջ։

Պառավն ասաց թաքավորի տղին.— Կարեմ զքու պատանք, ես ի՞նչ եմ էրիր քըզի, դուն կուգաս ընկնիս իմ արտի մեջ, դուն գնա քու դարդ խոքըցիր, օր Քյուրդ-Օղլին քու ախպեր չէ, օր կղավթա քու խոր թախտ կնստի։

Թաքավորի տղեն ասաց պառվուն.— Պառավ, իմա՞լ Քյուրդ-Օղլին իմ ախպեր չէ։

Պառավն ասաց.— Ապա դու չըս դի՞տեր, վազիրն էնի ուրիշ տեղե գներ ա, բերեր ա։

Թաքավորի տղեն էլ չկայնիր, կքշա ձին, կուգա տուն կիշնի, կվերցա ուրին հապիկե մի, կլցա քիչ մը օսկի, կթալա ձիու թարք, ու կընկնի ճամբախ, կէրթա։ Շատ կէրթա, քիչ կէրթա, հ'աղբըրի մը ռաստ կուգա։ Ձիուց կիշնի, էտ հ'աղբըրի վերեն կքնի։

Էնի էնտեղ թըղ քնի, մենք դառնանք Քյուրդ-Օղլու վերեն։

Քյուրդ-Օղլին կուգա տուն, կտեսնի օր ուր ախպեր տուն չէ։ «Ցա, ջանըմ, իմ ախպեր դյո՞ր ա գացեր ա»։ Վերնից օր կխարցուցա, չկանա խասկ'ընար դյո՞ր էրթալ։ Գելնի կէրթա պառվուն ռաստ կուգա։

Պառավ կասա.— Քյուրդ-Օղլի, քու ախպեր հ'ըռկեր ա, տնեն գացեր ա, դուն հ'որի՞ն ըսկի չըս խարցուցեր քու ախպոր վերեն։

Քյուրդ-Օղլին պառվու մոտեն կդառնա կուգա տուն, կառնի հագուբե[1] մի, կլցա քիչ մը օսկի, կթալա ձիու թարք, կկանչա աստված, կխեծնի ձին՝ կընգնի ճամբախ, կասա. «Հ'որի՞ պտի թաքավորի տղեն ուր տնեն խոռվի էրթա, մատամ օր ես թաքավորի տղեն չեմ, պետք ա ես էրթամ, ինք թող գա ուր տան վերեն, ուր խոր ու մոր հ'առեջ, ես էլ կէրթամ իմ խեր ու մեր գտնիմ»։

---

[1] Խուրջին (Ս. Բ.)։

Քյուրդ-Օղլին էտմլա ասելով կընգնի ճամբախ, ու կէրթա։ Շատ կէրթա քիչ կէրթա, թաքավորի աղն կգտնի։ Կտեսնի օր թաքավորի տղեն քներ ա, էլ չի ղիմիշիր հ'արթեցուցա, կնստի թաքավորի տղի գլխու վերև, քիչ մի կմնա, կտեսնի օր քառսուն խատ աշղիա[1] էնտեղեն կուգան։ Դեմ կէնին թաքավորի տղին ու Քյուրդ-Օղլուն, կքշին վերեն։

— Ահա,— կասա,— կտրիճ, ես քեզի ճրագով կփնտռի, դուն ցերեկով ռաստ էկար ձի, էլ դուն իմ ձեռնեն չըս ազատիր։

Թաքավորի տղեն քնուկ կէղնի։ Քյուրդ-Օղլին կթռնի կայնի, շուտ մի ձին կխեծնի, կբռռա գըյնի էտոնց մեջ, կզանին իրարու։ Քյուրդ-Օղլին եռսուն ութն էլ կսպանա, էրկուսն էլա սաղ կբռնա, կկապա իրար, էտոնց ձիանքն էլա կբերա թաքավորի տղի չորս բոլոր կկապա։ Թաքավորի տղեն քնուց հալա չհ'արթեր ա։ Քիչ մի կմնա, թաքավորի տղեն քնուց կհ'արթի, գելնի կասա.— Յա՛, ախպեր, աստված խերն էնա, էս ի՞նչ ես էրեր դուն։

Քյուրդ-Օղլին ասաց.— Ախպեր, չըս ասեր քառսուն խատ աշղիա գող թալեցին մեր վերեն, դուն էլա քնուկ իր, չի ղիմիշա քեղի քնուց հ'արթեցուցի, եռսուն և ութ ըսպանեցի, էս էրկուս էլա թողեր եմ, ի՞նչ կասես։

— Էս էրկուս թող, թըղ էրթան։ Բեր էսա էրկըսի ատրմներ քակենք, շարենք ճակատ, ու թողնենք էրթանք։

Քյուրդ-Օղլին բերեց էրկըսի ատրմներ քակեց, շարեց ճակատ, ասաց.— Ախպեր, էսոնք օր ես թողնիմ, կէրթան քառսուն խատ էլ բերեն, Ես էսոնք կսպանեմ։

Քաշեց թուր, զարկեց էրկըսի գլոխն էլ ա կտրեց։

Քյուրդ-Օղլին ու թաքավորի տղեն հ'ելան խեծան ձիանք, ընկան ճամբախ, գացին։ Շատ գացին, քիչ գացին, գացին ջոջ քաղքի մի ռաստ էկան։

Քյուրդ-Օղլին ասաց.— Ախպեր, մեկ էսա քաղքի մեջ էրթանք տուն մի գտնինք, մըսաֆըր էղնինք։

Էրկուս մեկտեղ գացին, ռաստ էկան պառվու մը տան։

Քյուրդ-Օղլին ասաց.— Բարի լուս, նանե՛։

Պառավն ասաց.— Ասսու բարին, էսոնք ո՞րն ա էկան կայնան իմ դուռ։

Քյուրդ-Օղլին ասաց.— Նանե՛, մըսաֆըր ենք։

Պառավն ասաց.— Դե՛, քաշվեք, գացեք, ձի տեղ չկա։ Ձի տեղ էղնի՝ ես կպառկիմ։ Աստված իմ չար խափանես, որն օր կուգա՝ գու-

[1] Ավաղակ (Ս. Բ.)։

գա կկանի իմ դուռ, չըն ասե՝ «Իսա պառվուն տեղ հ'ուստ ա», կարած պատանքներ։

Քյուրդ-Օղլին ձեռ կթալա ջեր, ճանկ մի օսկի կխանա, կուտա պառվուն։ Պառավն օր օսկին կտեսնի, կասա.— Բարով ու խերով եք էկե՞ր, իմ գլխուն ու էրեսին եք էկե՞ր, ըպա ես ձեղի տեղ չի տամ՝ էլ վի՞ր պըտի տամ։

Պառավն ա, ամներ կթափա դուրս, էրկսի ձին էլա կքաշա ներս, էրկուսն էլա կտանի տուն, տեղ կուտա, կնստին, կհ'ըռահտթին։

Քյուրդ-Օղլին կասա.— Ախպեր, ձիանք ծարավ են, հ'ելիր առ քու ձին տար հ'աղբուր ջրա, առ արի։

Թաքավորի տղեն գելնի, կառնի ուր ձին, կէրթա հ'աղբուր, ձին կքաշա վըր ջրին, ձին ջրից կխրտի, կտեսնի օր շավեխ մի կերևա ջրի մեջ. էնոր հ'ապով ձին շուր չխմեր, կիշկա տեսա, տենա՝ մարդ չտեսնիր։ Ղամչի մի ձիուն կղանի, ձին էմլե ջուր չի խմեր։ Հ'աղբրի հ'առեջ բալկոն մի կէղնի, կիշկա էտ բալկոն, կտեսնի օր խուռնիկ հրեղեն խորոտիկ ախչիկ մի կայնուկ է էտ բալկոն, ախչկա շավխ ղարկեր ա ջրի մեջ, ձին էնորից ջուր չխմեր։ Տղեն էլա օր էտ ախչիկ կտեսնի, ուշք կհ'ընցնի, կընգնի գետին։ Էտ քաղքի մարդիկ ակյար կնկտիք կուգան կժողվին էտ տղի գլխուն։ Կիշկեն օր խորոտիկ տղե մի ուշք հ'ընցեր է, ընկեր է գետին։

Քյուրդ-Օղլին կիշկա օր ախպերը հ'անկըցավ, ասավ՝ «Ջանըմ, իմ ախպեր ի՞նչ էլավ»։

Քյուրդ-Օղլին հ'ելավ գնաց հ'աղբուր, տեսավ օր, որն օր կուգա, կվազնի հ'աղբրի վերեն։ Քյուրդ-Օղլին քաշեց զթուր, քշեց հ'աղբրի վերեն, հ'իմցավ օր ուր ախպոր վերեն ա կժողվին։ Մարդիկ տվեց մեկտեղ, գնաց ախպեր վերցրեց, ախպոր ուշք հ'ընցուկ ա. գրկեց ախպեր, ջուր լցեց գլխուն, ախպեր հ'իշարցավ։

Քյուրդ-Օղլին ասաց.— Ցա՛, ախպեր, աստված խերն էնա, հ'որի՞ն դու հըմլա էղար։

Ախպերն ասաց.— Ախպե՛ր, ես էսա բալկոն ախչիկ մի տեսա, իմ ուշք գնաց, ես ընկա. օր ես մեկելա էս ախչիկ չտեսնիմ, մայյամ կմեռնիմ։

Քյուրդ-Օղլին ու ուր ախպեր հ'ելան էկան պառվու տուն, պառվուն ասեցին.— Պառա՛վ, դուն էղնիս քու աստված, էսա բալկոն վի՞ր բալկոն ա։ Պառավն ասաց.— Էսի թաքավորի բալկոն ա,— պառավն ասաց,— հ'որի՞ն կխարցուցես։

Ասաց.— Ես էսա բալկոն ախչիկ մի տեսա, իմ ուշքը հ'ընցավ, ես ընկա, օր էս ախչիկ մեկելա չտեսնիմ, ես կմեռնիմ։

Պառավն ասաց.— Ես չըմ կանար քեղի տանիր ախչըկե մոտ։

Տղեն ասաց.— Պառա՛վ, ըպա իմա՞լ կէղնի։ Վերև աստված, ներքև դու, չարեմ էնես։

Պառավն ասաց.— Գնա՛ այսինչ տեղ, էնոր վարժունի[1] մոտ, վարժուն օր քեղի չտանի ախչկե մոտ, էլ մարդ չկանար տանիր։

Քյուրդ-Օղլին ուր ախպեր հ'ելան գացին վարժունի մոտ, վարժունին ասին.— Բարև, վարժուն։

Վարժուն ասաց.— Աստծու բարին, խե՞ր ա, դուք էկաք էստեղ։

Քյուրդ-Օղլին ասաց.— Վարժուն, թաքավորի ախչիկ բալկոն կէղնի, իմ ախպեր կտանի ձին ջրա, աչք կառնի թաքավորի ախչըկան, ուշք կընցընի, կընգնի գետին, մկա էլա կասա՝ «Օր ես անգամ էլա չտեսնիմ, ես կմեռնիմ»։ Էկեր ենք քու մոտ օր իմ ախպեր տանիս թաքավորի ախչիկ տեսնի։

Վարժուն ասաց.— Ես չըմ կանար քեղի տանիր թաքավորի ախչկե մոտ։

Քյուրդ-Օղլին ասաց.— Վարժուն, հըպա իմա՞լ կէղնի, իմ ախպեր կմեռնի, օր անդամ էլա չտեսնի։

Վարժուն ասաց.— Ես իմա՞լ էնիմ, իմ ձեռ չարա չկա։ Ես գուղեմ, օր մեռնիմ, քու ախպեր չմեռնի։

Քյուրդ-Օղլին ասաց.— Վարժուն, թաքավորի դուռ ո՞ր մեկն ա։

Վարժուն ասաց.— Էսա ջոջ դարգյախ օր կերևա, թաքավորի դարդյախն ա։

Քյուրդ-Օղլին ասաց.— Թաքավորի ախչիկ ի՞նչ տեղ կմնա, ո՞ր մեկ հ'օդեն ա։

Ախչիկն[2] ասաց.— Կէրթաս դարգրխեն կմտիս ներս, գելնիս թարանջներ, աջ թևի վերեն հ'օդե մի կա, էն հ'օդի մեջ ախչիկ կմնա. ուրբաթ օր կեսորին ախչիկ պարապ ա, ես կէրթամ, դաս կուտամ։

Քյուրդ-Օղլին ասաց.— Վարժուն, կխնդրեմ քու շորեր տաս ձի, էլ ես քեղնե բան չըմ հ'ուղեր։ Քու շարշափն[3] էլա տաս՝ շնորհակալ եմ քեղնե։

Քյուրդ-Օղլին վարժունի շորեր առավ, խագավ, շարշափ քաշեց գլխուն, ուրբաթ օր կեսորին գնաց թաքավորի տուն, հ'ելավ թարանջներ, աջ թևի վերեն մտավ հ'օդեն, տեսավ ուր խուրնիկ-խորոտիկ ախչիկ մի մընակը նստեր է հ'օդեն։ Ախչիկն էլ գիտաց թե ուր վարժուն ա, էկավ ուրին դաս կուտա, ուր դասի վախտն ա։

---

1 Վարժուհու (Ս. Բ.)։

2 Վարժուհին (Ս. Կ.)։

3 Ցարսավ (Ս. Բ.)։

Քյուրդ-Օղլին գնաց սարպաստ նստավ, ախչիկ առավ գիրք, էկավ չոքավ Քյուրդ-Օղլու հ'առեջ։ Քյուրդ-Օղլին դաս սովորցուց, դրեր մատով տվեց նշանց։ Ախչիկն օր Քյուրդ-Օղլու մատ տեսավ, ճանչցավ, գիտցավ օր ուր վարժուն չէ, ետ քաշվավ։

Քյուրդ-Օղլին ասաց ախչկեն.— Ախչի՛, էլ իմ ձեռնեն հ'ո՞ւր կփրցիս, ես քեզի հ'ապով եմ էկեր։ Իմ ախպեր էկավ հ'աղբուր ձին ջրեց, քեզի տեսավ, ուշքն հ'ընցավ, օր մեկելա քեզի չտեսնի, մատյամ կմեռնի, գու գիտես, պետք ա օր դաս, իմ ախպեր քրդի տեսնի։

Ախչիկն ասաց.— Ես ուրբաթ օր կեսօրին կէրթամ խաս-բախչեն, բախչապանին կասեմ՝ «Խըլըսուն շուտ, տղե մի կուգա, էն տղեն ներս առնիս»։ Բախչապան ներս կառնի, ես էլ կէրթամ, իրար կտեսնինք։

Քյուրդ-Օղլին գելնի կէրթա պառվու տուն, ախպոր կասա.— Ախպեր, ուրբաթ օր կեսավրան խաս-բախչեն պտի էրթաս, ախչիկն էնտեղ տեսնիս։ Էսհմլա խոսք տվեցինք իրարու։

Ուրբաթ օր, խըլըսուն շուտ տղեն հ'ելավ գնաց։ Գնաց, պախչեպան դուռ կայնուկ էր, ասաց.— Արի ներս։

Տղեն գնաց ներս, տղեն տեսավ օր մարդ չկեր դեղ, գնաց ծառի տակ նստավ, քունն հ'ընցավ վերեն, քնավ։ Շատ կքնի, քիչ կըքնի, աստված դինա։ Ախչիկն էկավ տեսավ, օր տղեն ծառի տակ քնուկ ա, քաշեց վարդ, լցեց տղի վերեն, տղեն չհ'արդավ, հըմալ վարդ քաղեց օր լցեց տղի վերեն, տղեն վարդի մեջ կուրուսավ։ Տըղեն քնուց չհ'արդավ։ Ախչիկը տեսավ օր տղեն քնուց չի հ'արդիր, ախչիկ թողեց գնաց։

Տղեն հ'արդավ, հ'ելավ տեսավ օր ախչիկն էկեր ա, վարդ քաղեր ա, լցեր ա ուր վերեն, ինք չէ հ'արդեր ա։ Տղեն ասաց՝ «Հե՜յ վախ, հե՜յ վախ, էկավ ու գնաց, չտեսա»։

Տղեն հ'ելավ գնաց. գնաց պառվու տուն, ախպորն ասաց.— Ախպե՛ր, գացի խաս-բախչեն, քունն հ'ընցավ վերես՝ ես քնա, ախչիկն էկեր, վարդ քաղեր, լցեր էր վերեսի, ես չհ'արդեր ի, թողեր էր, գացեր էր։ Ես քնուց հ'ելա ախչիկ չտեսա։ Ախպեր, դո՛ւ գիտես։

Ախպեր գնաց վարժունի մոտ։ Վարժունի շորեր առավ, խագավ, շարշափ թալեց գլխուն, գնաց ախչկա մոտ։

Ախչիկն ասաց.— Հա՜ն տղա, հ'որի՞ն էկար։

— Իմ ախպերն էկեր էր խաս-բախչեն քներ էր, դուն էկեր իր խաս-բախչեն, վարդ քաղեր իր, լցեր իր վերեն, քնուկ տեղեն չըհ'արդեր էր, թողեր իր, գացեր իր։ Իմ ախպեր քեզի չտեսավ. իմա՞լ կէղնի, օր չտեսնի, կմեռնի։

Ախչիկն ասաց.— Է՛լ քու ախպեր ձի չկանար տեսնիլ, ես հ՛ուզուկ[1] եմ Քաջանց թաքավորին, ձի մացեր ա իրեք օր, օր գան զիս տանին. էլ ես չեմ կանար դուս հ՛ելնիր։

Քյուրդ-Օղլին ասաց.— Ախչի, ապա ի՞մալ կէղնի։ Դուն գիտես, օր իմ ախպեր քեզի չտեսնի, կմեռնի։

— Էն դյախ օր խարսնիքվորներ կուգան, զիս օր կտանին մեր քաղքի գլոխ մեր գերեզմընոցն է, իմ մեր մեռեր է, իմ մոր վերա խունձ[2] ինք շիներ ինք, ես օր գացի էնտեղ, գիշնիմ ձիուց, կէրթամ իմ մոր գերեզմընի վերեն, իմ մոր գերեզման կտեսնիմ, նոր գելնիմ էրթամ։ Ակյար էն դյախ կանաք զիս կտեսնիք, չը խո չէ՝ զիս էլ չկանաք տեսնիք։

Քյուրդ-Օղլին ախչրկե մոտեն հ՛ելավ էկավ պառվու տուն։ Մացին իրեք օր, Քաջանց թաքավորի հարսնիքվորներ էկան, օր խարս տանին։

Քյուրդ-Օղլին ասաց ախպոր.— Ախպեր, հ՛ելիր էրթանք մրտնինք խունձ, օր ախչիկ գա խնձի մեջ, ախչիկ էն տեղ կտեսնինք։

Քյուրդ-Օղլին ուր ախպեր էրկուս խդրած[3] հ՛ելան գացին մտան խնձան մեջ։ Քիչ մի մացին, տեսան օր ձիավորներ ջիլիթ խաղալեն, առած խարս էկան, կէրթան։ Խարսն էկավ խնձան հ՛առեջ, ձիուց հ՛իջավ, ձիավորներ ասին հարսին՝ «Հ՛որի՞ն գիշնիս»։

Խարսն ասաց.— Իմ մոր գերեզման էստեղն ա, ղարիբ էրկիր կէրթամ, իմ մոր գերեզման էստեղն ա, տեսնիմ՝ էրթանք։

Խարս մընակ մտավ գերեզման տեսնելու։ Տեսավ օր էրկու տղա էնտեղն են, Քյուրդ-Օղլին ու ուր ախպեր։ Ջիրար տեսան, ախչիկն ասաց.— Մացեք բարով, ես կէրթամ։

Քյուրդ-Օղլին ձեռ թալեց ախչկե բըլակ բռնեց, ասաց.—Դո՞ր կէրթաս։ Դուն քու շորեր տուր ձի, ես կէրթամ քու տեղ։

Ախչիկն ասաց.— Ջանըմ, էտմալ բան չէղնիր։

Քյուրդ-Օղլին ասաց.— Կէղնի, հ՛ո՞րի չի էղնիր։ Դուն ու իմ ախպեր մացեք էդտեղ, ես կխագնիմ քու շորեր, կխեծնիմ քու ձին, քու տեղ կէզնիմ խարս, կէրթամ։

— Լավ,— ասաց ախչիկ,— օր գացիր, թագավորի պստիկ ախչիկ օր չբերես քեզի, ես էլ քու ախպեր չեմ առնիր։

— Լավ,—ասաց Քյուրդ-Օղլին,—կբերեմ։

---

1 Նշանված (Ս. Բ.)։

2 Խուց, մատուռ (Ս. Բ.)։

3 Իրար հետ, միասին (Ս. Բ.)։

Շորերն առավ, խագավ, էղավ խարս, հ'ելավ խեծավ խարսի ձին ու գնաց։

Շատ գնաց, քիչ գնաց, գնաց հասավ Քաջանց թաքավորի էրկիր։ Ջուհար գնաց թաքավորին.— Թագավոր սաղ մնա, գացինք առանք խարս՝ էկանք։

Խարս տարան իջուցին ջոկ հ'օդե մի։ Թագավոր հ'ելավ թուղթ մի գրեց ճամբխեց ուր նշանլուին, ասաց թե՝ «Խըլսուն կպսակվինք»։

Խարսն հ'ելավ թղթի պատասխան գրեց հ'ըմլա՝ «Մենք էտըմլա շուտ պսակվել չկա, մեր ագաթ քառսուն օր ա, քառսուն օր կըմնաս, նոր ես ու գուն կպսակվինք»։

Թագավոր հ'ելավ ուր ջոջ ախչիկ ճամբխեց խարսի մոտ։ Ախչիկն էկավ խարսի մոտ օր մի մնաց։ Խարս ասաց ախչըկեն.—Գնա՛, գու ընձի պետք չես, իմ սիրտ քու խետ չը բացվիր։

Աղչիկն էկավ, թաքավորին ասաց, թագավորն հ'ելավ, միչնեկ ախչիկ ճամբխեց, միչնեկ ախչիկ էկավ խարսի մոտ, օր մի մնաց, խարսն ասաց.—Գնա՛, իմ սիրտ քու խետ չը բացվիր։

Ախչիկ գնաց թաքավորին ասաց, թաքավորն ասաց.— Հա՞, հրա՞, գիտեմ, օր խորոտկի սիրտ, խորոտկով կբացվի։ Խարսն էլա լսելա օր իմ պստիկ ախչիկ շատ խորոտիկ ա։

Թաքավորն հ'ելավ, պստիկ ախչկեն կանչեց, ասաց.— Ախչի՛, արի գնա խարսի մոտ։

Ախչիկն հ'ելավ գնաց խարսի մոտ։ Մացին քսան օր, ախչիկն ու խարս իրարու մոտ։ Խարսն ասաց ախչըկեն.—Օր դուն չէղնիր, ես քրբու կմեռնի,— խարսն ասաց ախչըկեն,— ախչի, էսա քու խեր ինչքա՞ն անաստված ա, տես, ես էլա քեզի պես ախչիկըմ եմ, զիս ի՞մալ կուզա ուրին կնիկ, ուր ախչիկներ ընձնից ջոջ են, ասսուց չը վախենա՞ր։

Ախչիկն ասաց.— Իմ խեր թաքավոր ա, ինչ էնա՝ կէնա։ Օր ասսուց չվախենա, մարդուց էլա չի վախենար։

Խարսն ասաց.— Ախչի, արի ես ու դուն աստված խանչինք, բալքի աստված մեղի՝ կամ ընձի, կամ քեզի ճուճ մի տա, մենք առնինք զիրար։

Ախչիկն ասաց.— Խարս, հմալ բան կէղնի՞։

— Կէղնի՛, հ'որի՞ն չի էղնիր։ Օր մենք աստված խանչենք, հ'իստակ սրտով, աստված մեր գործ կհաջողցուցա։

Ախչիկն ասաց.— Ախչի, դե, հ'ելիր նստինք աստված խանչենք, բալքի աստված էրկսես մեկի տա։

Խարսն հ'ելավ, ընկավ վրը չոքերուն, էլաց ու աղաղակեց.— Աստված, փշուր մի ճուճ տաս ընձի, ես ու էսա խեղճ ախչիկ էս անաստվածի ձեռնեն փրծինք, մենք առնինք հ'իրար։

Էն օր չուր իրիկուն աստված կանչեցին, խարսն ասաց.— Ախչի, ձի փըշուրմ՝ էղեր ա, քեղի չի՞ էղեր ա։

Ախչիկն ասաց.— Չէ՛։— Ախչիկն ասաց.— Խարս, դու աղեկ դիտես աստված կանչես, սրտով կանչա՛, բալքի թամամ էղնի։

Խարս չոքավ ու սրտով կանչեց աստված.— Աստված, տվեր ես, բալը թամամ չէ՝ փշուրմ՝ էլա տաս, կթամամի։

Խաբսն ասաց ախչկան.— Ախչի, մի՛ վախենար, վալլահ թամամ էղավ, դե արի պառկինք։

Էրկուս պառկան իրարու խետ, իրարու քեֆն էրևցին, մնացին չուր մի քառսուն օր թամամ էղավ։ Թաքավոր թուղթ գրեց, ճամբեց խարսին՝ «Մեր օր լըմեցավ, խըլըսուն պըտի պսակվինք»։

Ախչիկ թղթի պատասխա՞ն դրեց՝ «Շատ աղեկ, վաղն էլ թող մնա, մեկլօր նոր պսակվինք»։ Ախչիկ գրեց թաքավորին թե՝ «Քու քաղքի մեջ ինչքան օր որձ մարդ կա, խըլսուն պըտի դուրս չելնի, ես ու քու ախչիկ խեծնինք ձիանք, հ'ելնինք փշուր մի ջըրինթ խաղանք, դուն էլա պըտի նստիս քու սարի[1] դուռ, թամաշ էնես։

Թաքավորն ասաց.— Շատ աղեկ, ես ուրախ եմ էտա բանին։

Ախչիկ դնաց, ձի պախող մշակ տեսավ, ասաց.— Առ քեզի ճանկ մի օսկի, էրկու խատ իմալ ձի տաս օր՝ օր ուրանց պես հ'ուհու չէղնի։

Մշակն ասաց.— Շատ աղեկ, իմ աչից վրեն։

Առավ էրկու ձին, մշակն էկավ հ'օղի դուռ, խարսն ու ախչիկ ձիանքն խեծան, հ'ելան ջըրընթի։ Թաքավոր տեսավ, ասաց՝ «Կայնի տեսնինք իմ կնիկն ա կտրիճ, չխո իմ ախչիկ»։

Խարսն ու ախչիկ քշեցին ձիանք, կես սհաթ թաքավորից հեռեցան, դարձան էկան։ Ձիանք տաքցուցած ա, մեկ էլ հ'իրարու խետ քշեցին, սահաթ մի հեռեցան, դառցան էկան, օր էրթալու վախտ չէղնի թաքավոր հ'իմնա թե կվախնին։ Ձիանք մեկել ա քշեցին, գացին ու գացին։

Թաքավորն իշկեց սահաթ մի, էրկու, իրեք, խարսն ու ախչիկ չէկան։ Հավար էցկեց քաղքի մեջ։ Հանեց ձիավորտանք էցկեց խարս ու ախչկա հ'ետև։ Փնտռեցին չգտան։ Էկան թաքավորին ասին.— Վալա չեմ գիտեր, կուրուսան, գացին, չէրևան։

---

1 Պալատի (Ծ. Բ.)։

Քյուրդ-Օղլին ու ախչիկ էկան հ'իջան պառվու տուն։ Ախպերն օր տեսավ գՔյուրդ-Օղլին, ուրախութենեն ծռավ։

Քաջանց թաքավոր ջուհար էրեց ուր աներոջ, ասաց.—Քու ախչիկն օր ճամփրխեցիր ընձի, առեր է իմ ախչիկն ու փախեր է։

Թաքավորն ասաց.— Ջանըմ, ես էսա քառսուն օր ախչիկ տվեր եմ, դու գիտեք, ես ի՞նչ դիտեմ դոր ա։

Թուղթ բերողն ասաց.— Յան քու ախչիկ ու թաքավորի ախչիկ կդտնիս տաս, յան էլա չէ՝ խըլըսուն քու վերեն կռիվ ա։

Թաքավորն ասաց.— Դուք եք տարեր, ես հ'ո՞ւստի դտնիմ։

Քյուրդ-Օղլին լսեց, հ'ելավ գնաց քաղքի գլոխ կայնավ։

Թաքավորն օր թուղթ դրեց, տվեց էգ մարդեկաց մոտ, օր տանին ուրանց թաքավորին։ Քյուրդ-Օղլին հ'ելավ էսոնց հ'առնջ, ասաց.— էն թուղթ տուր օր թաքավորն ա ավեր ա, բան ա մոռցեր ա, տուր գրիմ ինի, առեք գացեք։

Թուղթն առավ, գրեց թղթի մեջ. «Թաքավոր, քու նշանածն ու քու ախչիկ էստեղ են, քու ձեռնեն ինչ օր գուգա՝ ետ մի թողնիր բեմունաթ»։

Առան թուղթն ու դացին։ Քաջանց թաքավոր թուղթն օր կարդաց, խելքը գլխեն գնաց։ Ինչքան օր ասկյար ուներ՝ հ'ըմմեն ճամբեց էկավ էտ թաքավորի վերեն կռիվ։

Բարի լուսն օր բացվավ, վըր գրողին, վըր ասողին, վըր թաքավորին, հ'ելավ իշկեց օր, ի՞նչ իշկա. աստղ հ'էրկընուց էղեր է ասկյար, քաղքի բոլոր փաթեր ա։ Սկսած ա կռիվ։ Քյուրդ-Օղլին ձին խեծավ, քաշեց զթուր, ու գնաց կռիվ։ Իմալ օր ինք ջարդեց, խինք իմալ էլա ձին ջարդեց։ Թաքավորն հ'ելեր կայներ էր՝ թամաշա կէներ, թաքավոր չըր գիտեր էտ կռվող ձիավոր ո՞րն էր, գիտեր քի խրիշտակ էր։ Քյուրդ-Օղլին Քաջանց թաքավորի ասկյար կոտրեց, հ'ըմմեն փախան, որն օր սաղ մնաց, գացին ասին Քաջանց թաքավորին՝ «Հալ ու հավալ հըմլա բանմ՝ հ'ելավ մեր գլոխ։ Մեկ ձիավոր էր մեզի ամլե էրաց, օր էրկուս էղներ՝ մեկ խատ մեզնե չփրցեր»։

Քյուրդ-Օղլին կռվուց օր փրցավ, թուր զարկեց ուր ձեռ փշուր մի կտրեց, օր թաքավոր գիտնա Քյուրդ-Օղլին ա էրող։ Գնաց թաքավորի սարի տկով հ'ընցավ, թաքավոր տեսավ օր ձեռ յարալի ա, ուր դաստըմալ խանեց տվեց Քյուրդ-Օղլուն, ասաց.—Ա՛ռ կապա քու ձեռաց։

Քյուրդ-Օղլին առավ, կապեց ուր ձեռաց վերեն, գնաց պառ-

վու տուն, քիչ մի մնաց, Քյուրդ-Օղլին ասաց.—Կայնեք, էրթամ թաքավորի մոտն ու դամ։

Հ'ելավ գնաց թաքավորի մոտ, թաքավոր տեսավ օր ուր դաստրմալ կապուկ ա ձեռաց վերեն. խասկցավ օր էրողն ինքն էր, ասաց.— Տղա՛, էսի ո՞րն էրաց։

Քյուրդ-Օղլին ասաց.— Ես էրեցի, քու ախչիկն էլ բերեր եմ, թաքավորի ախչիկն էլ բերեր եմ. քու ախչիկ իմ ախպոր տվեր եմ, թաքավորի ախչիկն էլա ձի եմ առեր։

Թաքավորն ասաց.— Քյուրդ-Օղլի, հ'ուզա՛, օր տամ։

Քյուրդ-Օղլին ասաց.— Բան էլա չըմ հ'ուզեր,— շնորհակալ էղավ թաքավորից, ասաց.—Ես պըտի էրթամ մեր տուն։ Ես էլա թաքավորի տղա եմ։

Թաքավորն ասաց.—Արի պսակվի՛ր, խարսնիս էրա, նոր դնա՛։

Քյուրդ-Օղլին ասաց.—Ես կէրթամ մեր տուն։

Թաքավորն ասաց.— Գնա՛, աստված քու խետն էղնի։

Մնաս բարով, էրթաս բարով ասեցին, թաքավոր Քյուրդ-Օղլուն ճամբխու դրեց։ Քյուրդ-Օղլին ու ուր ախպեր, էրկըսի նշանած իրարու խետ հ'ելան էկան։ Շատ էկան, քիչ էկան, էկան խասան ուրանց էրկիր։ Ջուհաբ գնաց թաքավորին, աչքտի լուս, թաքավոր, Քյուրդ-Օղլին ու ուր ախպեր էկան։

Թաքավոր հ'ելավ տեսավ օր էրկու խատ էլա ախչիկ կա խետըվներ։

Թաքավորն ասաց.— Էս ի՞նչ ախչիկ ա։

Քյուրդ-Օղլին ասաց.— Աստված տվեց, մեր ղսմաթը էս էր, մեկ իմն ա, մեկ իմ ախպորն ա։

Քյուրդ-Օղլին ասաց թաքավորին.— Իմ ախպեր անպսակել ա, խարսնիսի թադարեքն էրա, իմ ախպեր պսակենք։

Թաքավորն հ'ելավ խարսնիք բռնեց, քառսուն օր, քառսուն գիշեր զարկեցին ու խաղցան, խեքիաթ գրողին, խեքիաթ ասողին դուղա[1] էրեցին։ Էնոնք խասան ուրանց սրտի մուրազին, դուք էլ հասնիք ձեր սրտի մուրազին։

Քյուրդ-Օղլին ասաց թաքավորին.— Թաքավոր, պետք ա իզին տաս, ես էլ էրթամ իմ խեր ու մեր գտնիմ։

Թաքավորն ասաց.—Գնա՛, աստված քու խետն էղնի։

Թաքավորը բարձավ քառսուն ձի, տվեց Քյուրդ-Օղլուն, ասաց.— Գնա՛, աստված քու բան հաջողա։

---

1 Գոհության մաղթանք (Ծ. Բ.)։

Մնաս բարով, էրթաս բարով ասեցին, ճամբխու դրեցին։

Քյուրդ-Օղլին շատ գնաց, քիչ դնաց, աստված գիտա, քաղքի մի ռաստ էկավ։ Տղեն ուր տուն չդիտեր, կանչեց աստված, ձիու գլոխ թորկեց, ասաց՝ «Ի՞շալլահ իմ ձին դյոր օր կանավ, մեր տուն էնտեղն ա»։ Ձին թորկեց, գնաց դուռ մի կանավ, ձիուց իջավ, տեսավ օր մարդ մի ու կնիկ մի գոնեն հ'ելան դուրս, ասաց իտա մարդ.— Բարով, խաղար բարով էկար։

Խարս ձիուց իջուցին, բեռներ դարտրկեցին, գացին տուն։

Տղեն ասաց.— Խերիկ, ձեզի ըսկի կուրուսած տղա կա՞։

Խերն ասաց.— Լաո՛, քեզի պես տղե մի ունի, այմի կնմաներ քեզի, վազիր մի էկավ, հ'ուզեց տարավ։

Մերն էլաց, տղեն ասաց.— Նանե՛, հ'որի՞ կուլաս։

Մերն ասաց.— Ես չի լամ հ'ըպա ո՞ր լա։ Մեկ տղա ունի, էսա տրսնրհինգ տարի կուրուսեր եմ, մացեր եմ ես մընակ, ու իմ խեղճ խալիվոր։ էլ նյա օլա[1] ունիմ, նյա թյոլա[1] ունիմ։

Տղեն ասաց.— Մերի՛կ ջան, ես քու տղեն եմ, աստված իմալ օր քեզնե առավ, էմալ էլա տվեց։—Մեր էլաց, փաթվավ տղի վըզով.— Նանե ջան, էս էլա քու խարսն ա, ես հըլա չըմ պսակվեր եմ, հ'ելեք ձեր թաղարիք էրեք, օր իմ խարսնիք ընեք։

Խերն ու մեր հ'ելան խարսնըսի թաղարիքն էրեցին, քառսուն օր, քառսուն գիշեր դհոլ ու զուռնեն զարկեց, դուռ ու դրկիցներով, ազգ ու տկով, մարդ ու բարեկամով տղեն տարան պսակ։ Պսակուց էկան տուն։ Բարեկամներն էկան, խորն ու մոր ձեռք տվին. «Աստված բարի վայելում տա», ասեցին, «Սինաման ծառ էղնի, ճյուղ տա, աստված իմալ օր ձեզի ուրախցուց, ձեր աղբեն[2] հ'ըմմեն բարեկըմի վերեն էղնի»։ Կերան, խմեցին, խեքիաթ ասողին, խեքիաթ գրողին դուղա էրեցին։

Ուրանք խասան ուրանց սրտի մուրազին, դուք էլ խասնիք ձեր սրտի մուրազին։ էրկնուց իրեք խնձոր իջավ, մեկն ասողին, մեկ լսողին, մեկն էլ դուռ ու դրկիցին։

---

1 Ջավակ, սերունդ, շառավիղ (Ծ. Բ.)։

2 Հերթը, տառոսը (Ծ. Բ.)։